ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 193-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29.04.2024Թ. N 179-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 06/05/2024թ. <<Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին>> N Մ-06052024-06-0012 որոշումը և Արմեն Ռազմիկի Եղիկյանի /մուտք՝ 08.05.2024թ. թիվ 268 / դիմումը՝
Որոշում եմ.

1. Թումանյան համայնքի ղեկավարի 2024թ. ապրիլի 29-ի << ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> N 179-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) Որոշման 1-ին կետի 0,475756 հա մակերեսի փոխարեն կարդալ 0,473525 հա:
2) Որոշման 2-րդ կետի 0,475756 հա մակերեսի փոխարեն կարդալ 0,473525 հա:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. մայիսի 08
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 194-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում /վկայական՝ N 15112021-06-0074 և 06-035-0140-0015/ Արա Սարիբեկի Օհանյանի կողմից հանգստյան գոտու կառուցման /մուտք՝ 03.05.2024թ. թիվ 261/ նախագծման թույլտվության հայտը՝
Որոշում եմ.

Բավարարել Արա Սարիբեկի Օհանյանի կողմից գ.Դսեղ 4-րդ փողոց և գյուղ Դսեղ հողամաս հասցեներում գտնվող կադաստրային 06-035-0142-0007 և 06-035-0140-0015 ծածկագրերով հողամասերում Արա Սարիբեկի Օհանյանի կողմից <<ԴՍԵՂ ԾՈՎԵՐ>> բնության հուշարձանի շրջակայքում ռեկրեացիոն և բացօթյան հանգստյան գոտու կառուցման նախագծման հայտը և տրամադրել նախագծման թույլտվություն /ճարտարապետահատակագծային առաջադրանք/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 24 թ. մայիսի 08
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 195-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԴՍԵՂ ԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-035-0045-0007 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱՆԿՈՒՂԸ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 և 42-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտ արված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022 թվականի թիվ 14-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված շինությունները չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,հաշվի առնելով համապատասխան որակավորում ունեցող «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից շինության հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը, չափագրման տվյալների մուտքագրման 2023UQBJFH ծածկագիրը, սեփականության իրավունքի N 16022016-06-0026 վկայականը՝ տրված 16. 02.2016թ.,հիմք ընդունելով կադաստրային գործում առկա վկայականը,Դսեղ գյուղի կադաստրային քարտեզը և այն հանգամանքը,որ շենք-շինությունները կառուցվել են 1995թ և Գագիկ Ֆրանսիկի Ավետքիյանի /մուտք 29. 04.2024թ. թիվ 247/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Հաշվի առնելով հաշվառման տվյալների մուտքագրման 2023UQBJBH ծածկագիրը՝ օրինականացնել Գագիկ Ֆրանսիկի Ավետքիյանին սեփականության իրավունքով պատկանող Թումանյան համայնք,Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0045-0007 ծածկագրի 0,135509 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում 1995թ. ինքնակամ կառուցված 86,97 քմ արտաքին մակերեսով /ներքին մակերեսը՝ 66. 84/ կիսանկուղը և 26. 69 քմ արտաքին մակերեսով /ներքին մակերեսը՝ 26. 69/ անասնաշենքը:

2. Հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

3. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 24 թ. մայիսի 8
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 196-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով ,հիմք ընդունելով Լյովա Սեյրանի Քառյանի դիմումը և համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝
Որոշում եմ.

1.Լոռու մարզի Թումանյան համայնքի Ահնիձոր գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0002-0036 ծածկագրի անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ,Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Ահնիձոր ,1-ին փողոց, 9 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. մայիսի 08
ք.Թումանյան